ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի տնօրեն Սեն Սուրենի Արևշատյանին լավ են ճանաչում ոչ միայն բուն հայագետները, այլև բոլոր նրանք ովքեր թեկուզև հարևանցիորեն հետաքրքրվում են հայ փիլիսոփայության ու հոգևոր մշակույթի պատմության հարցերով: Նա հեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատությունների, այդ թվում առանձին գրքերով տպագրված 25 մենագրությունների ու հրապարակումների, որոնք լույս են տեսել ոչ միայն Երևանում, Միության այլ քաղաքներում, այլև Փարիզում, Վարշավայում, Շտուտգարդում և այլուր: Թեև աշխատությունների այդ պատկառելի թիվն ինքնին վերցրած արդեն վկայում է գիտնականի երեսուներեքամյա ծանր, տքնաջան ու համառ աշխատանքի մասին, բայց այդ ամենն ավելի լավ պատկերացնելու համար բավական է ասել, որ դրա համար պետք էր քաջ գիտենալ ինչպես հայ, այնպես էլ Արևելքի ու Արևմուտքի հին ու միջնադարյան փիլիսոփայության ու մշակույթի պատմությունը, բացի ժամանակակից կենդանի լեզուներից (հայերեն, ռուսերեն, անգլերեն) տիրապետել նաև դասական լեզուների (գրաբար, հին հունարեն, լատիներեն) և որ ամենակարևորն է՝ ունենալ պատմության նեբրին զգացողություն:

Ս. Արևշատյանը ծնվել է 1928 թ. Երևանում, 1945 թ. արծաթե մեդալով ավարտել է Զերժինսկու անվան միջնակարգ դպրոցը, 1951 թ. գերազանցության դիպլոմով՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և գիտական խորհրդի երաշխավորությամբ ընդունվել ՀՍՍՀ ԳԱ ասպիրանտուրա, ուր 1951—1954 թթ. մասնագիտացել է հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ XIV—XV դդ. Տաթևի համալսարանի ականավոր ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերաբերյալ: 1954—1959 թթ. Ս. Արևշատյանը եղել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի գիտաշխատող: 1959 թ. ապրիլին տեղափոխվել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան)՝ իբրև սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ: 1973 թ. ղեկավարել է հին բնագրերի ուսումնասիրման և հրապարակման բաժինը, իսկ 1982 թ. մարտին նշանակվել նույն ինստիտուտի տնօրեն: Սեն Արևշատյանը համատեղության կարգով եղել է նաև ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես» պատասխանատու քարտուղար (1959—1960 թթ.) ու փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատակից (1972—1979 թթ.):

Իր գիտական գործունեության սկզբից ի վեր զուգակցելով փիլիսոփայության պատմաբանի, աղբյուրագետի, տեքստաբանի ու թարգմանչի բացառիկ հմտությունները, Ս. Արևշատյանը փիլիսոփայապատմական ու աղբյուրագիտական հիմնարար աշխատություններով ընդլայնել է հայագիտության ավանդական շրջանակները, մասնավորապես՝ ամրացրել հայագիտության տակավին երիտասարդ, բայց և անչափ կարևոր բնագավառներից մեկի՝ հայ փիլիսոփայության պատմության աղբյուրագիտական հիմքը: Առանց չափազանցության կարող ենք ասել, որ նրա հրապարակումների ու թարգմանությունների շնորհիվ հայ փիլիսոփայության պատմությունը ոչ միայն իր արժանի տեղն է գրավել մեր հանրապետության հասարակական առաջատար գիտությունների շարքում, այլև մասամբ դուրս է եկել միութենական ու միջազգային ասպարեզ: Եթե մինչև վեր-

չեռ հայ բազմաղարյան փիլիսոփայական ու բնագիտական բարձրարժեք սկզբնաղբյուրներ, լինելով ձեռագիր վիճակում, գրեթե անհայտ ու սակավահայտ էին անգամ իսկ հայ ընթերցողներին, ապա Ս. Արևշատյանի թարգմանությունների շնորհիվ դրանց զգալի մասը մտել է գիտական լայն շրջանառության մեջ, դարձել հայ և օտարազգի մասնագետների սեփականությունը: Նա անձամբ կամ այլոց հետ միասին աշխատասիրել, ուսումնասիրել ու հրատարակել է հայ և համաշխարհային մշակույթի այնպիսի կարևորագույն հուշարձաններ, ինչպիսիք են «Հերմիա. Լուսամեծի առ Ասկղեպիոս սահմանք», Զենոն իմաստասերի «Յաղագս բնութեան», Հովհան Որոտնեցու «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», Հովհաննես Երզնկացու «Ի տանկաց իմաստասիրաց զոց խուղեալ բանք», «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի», Անանիա Նիրուկացու «Տիեզերագիտություն» աշխատությունները: Նա կազմել, թարգմանել ու մեկնաբանել է «Արեվելյան երկրների հաժշտական գեղագիտություն» (Մոսկվա, 1967) և «Համաշխարհային փիլիսոփայության սենթոլոգիա» (Մոսկվա, 1967) ժողովածուների հայկական բաժինները, որոնց միջոցով ռուսալեզու ընթերցողն առաջին անգամ հնարավորություն է ստացել ծանոթանալու հայ ժողովրդի բազմաղարյան հոգևոր ժառանգության սուավել արժեքավոր նվաճումներին: Այս ամենը Ս. Արևշատյանի կատարած աղբյուրագիտական հետազոտությունների ու հրատարակումների մի մասն է միայն. նրա հետազոտությունների կենտրոնում շարունակում է մնալ հայ ականավոր մտածողի՝ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հարուստ ժառանգությունը. նրա երկերի քննական բնագրերի կազմումը, ռուսերեն և աշխարհաբար հայերեն թարգմանությունն ու հրատարակումը: 1960—1980 թթ. նա հրատարակել է Դավիթ Անհաղթի երեք աշխատության քննական բնագրերը՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ, նմանից առաջաբանով ու արժեքավոր ծանոթագրություններով: Նա կազմել ու աշխարհաբար թարգմանությամբ հրատարակել է նաև Դավիթ Անհաղթի երկերի մեկնատրյակը: Ս. Արևշատյանի առաջաբանով ու ծանոթագրություններով 1975 թ. Մոսկվայում «Փիլիսոփայական ժառանգություն» մատենաշարով ռուսերեն լույս սեսավ հայ մտածողի երկերի մեկնատրյակը: Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանի օրերին այն ունեցավ նաև երկրորդ հրատարակությունը: Վերջապես, հոբելյանի առթիվ Ս. Արևշատյանը պատրաստել, ծանոթագրել ու ծավալուն առաջաբանով հրատարակել է նաև անանուն կելիարեն Դավիթ Անհաղթի գրչին պատկանող փիլիսոփայական չորս երկերի գրաբար մեկնատրյակը: Սխալված չենք լինի, թերևս, եթե ասենք, որ առանց Ս. Արևշատյանի ավելի քան քսանամյա նախապատրաստական տքնաջան աշխատանքի, հաղիվ թե հնարավոր լիներ իրագործել Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանի տոնակատարությունը միջազգային մասշտաբով: Գիտական այդ հանդիսությունը մեծապես նպաստեց հայ փիլիսոփայության ու մշակույթի պատմության նկատմամբ հետաքրքրության աշխուժացմանը ոչ միայն Հայաստանում ու Սովետական Միությունում, այլև արտասահմանյան երկրներում: Բավական է ասել, որ 1983 թ. ԱՄՆ-ում Բրիջիդ Քենդալի և Ռոբերտ Թոմսոնի թարգմանությամբ անգլերեն լույս տեսավ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկը 1960 թ. Ս. Արևշատյանի հրատարակած գրաբար քննական բնագրի հետ միասին: 1986 թ. Լոս Անջելեսում Կալիֆոռնիայի համալսարանն առանձին ժողովածուով հրատարակեց նաև Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանի առթիվ Երևանում կայացած գիտաժողովում արտասահմանյան հյուրերի կարդացած զեկուցումները: Գրքի վերջում տրված է նաև Անհաղթի աշխատությունների հրատարակության և նրա մասին եղած հետազոտությունների գրեթե ավարտուն մատենագիտությունը, որի հիմքում ընկած է Ա. Հարությունյանի կազմած և Ս. Արևշատյանի խմբագրությամբ 1980 թ. Երևանում հրատարակված մատենագիտական ցանկը:

Հայ փիլիսոփայական, գեղագիտական ու բնագիտական աղբյուրների թարգմանության ու հրատարակության մարզում Ս. Արևշատյանի պատկառելի ներդրումը կարող է չափակշռվել հայ փիլիսոփայության պատմության կարևորագույն պրոբլեմների ու մտածողների հայացքների հետազոտության ու գիտական լուսաբանման հետ: Այդ տեսակետից գիտական լուրջ արժեք են ներկայացնում «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները» (Երևան, 1957), «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում» (Երևան, 1973), «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջ» (Երևան, 1980), «Դավիթ Անհաղթ» (Մոսկվա, 1980), «Գլանորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (Ա. Մաթևոսյանի հեղինակակցությամբ, Երևան, 1984) մենագրություններն ու գիտական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածները: Այդ մենագրություններից երկրորդի համար 1971 թ. նրան շնորհվել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ս. Արևշատյանի աշխատություններում քննվում են աղբյուրագիտական ու փիլիսոփայապատմական կարևոր խնդիրներ, վերլուծվում են հայ փիլիսոփայական-տեսական մտքի մի շարք

ականավոր ներկայացուցիչների գոյաբանական, իմացաբանական, գեղագիտական, բարոյագիտական ու հասարակական-քաղաքական հայացքները:

Նա առանձնապես լուրջ ներդրում ունի այնպիսի կարևորագույն հարցերի արծարծման ու լուծման գործում, ինչպիսիք են Դավիթ Անհաղթի գրավոր ժառանգության նշգրտումը, հին ու միջնադարյան գրավոր բազմաթիվ հուշարձանների հեղինակների, գրության ժամանակը, հայ մշակույթի պատմության մեջ դրան տեղը, Հայաստանում փիլիսոփայական գիտության ձևավորման ու զարգացման մեջ թարգմանական գրականության խաղացած դերը, թարգմանական գործերի թարգմանության ժամանակի ու թարգմանչի բացահայտումը, հունարան դպրոցի գործունեության պարբերացումը, հայ իրականության մեջ կաթոլիկ միսիոներների գործունեության բնութագիրը, հակամիարարական շարժման պատմական նշանակության գնահատումը, Հայաստանում քրիստոնեական կրոնի ու եկեղեցու խաղացած դերը և այլն: Նշված հարցերի հիշատակումը բացառիկ նշանակություն ունի ոչ միայն հայ փիլիսոփայական մտքի պատմության իրական պատկերի լուսաբանության, այլև ընդհանրապես հայագիտության համար:

Ս. Արևշատյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև հայ ժողովրդի պատմության ակադեմիական ութհատորյակի ստեղծմանը: Ամփոփելով հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության ասպարեզում վերջին տասնամյակների կարևորագույն նվաճումները, Ս. Արևշատյանը գրել է V—XVIII դդ. հայ փիլիսոփայության պատմությունը, որը լույս է տեսել այդ հատորակության երկրորդ, երրորդ և չորրորդ հատորներում: Որպես գիտական խմբագիր, գիտնականը լուրջ օգնություն է ցույց տալիս հայոց փիլիսոփայության, իրավունքի, բժշկագիտության, պատմական ու գեղարվեստական երկերի հրատարակիչներին ու ռուսերեն թարգմանիչներին: Նրա խմբագրությամբ են լույս տեսել Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն ստորոգութեանցն Արիստոտելի», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» և Վսեւոլ Խաբուռու «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» մեծարժեք երկերը՝ իրենց բնական բնագրերով ու ռուսերեն թարգմանություններով: Նա խմբագրել է նաև մեր նշանավոր միջնադարագետներ Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» և Վ. Զալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմություն» ռուսերեն մեկնաբանությունները ու Եղիշեի «Վարդանանց պատմության»՝ Հ. Օրբելու ռուսերեն թարգմանությունը: Բոլորովին վերջերս նրա խմբագրությամբ Մոսկվայում հրատարակվեց Ս. Վարդանյանի արժեքավոր մենագրությունը XV դ. հայ նշանավոր բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու կյանքի ու գործունեության մասին:

Ս. Արևշատյանի օգնության կարիքն զգացել ու շարունակում են զգալ առավել ևս միջին ու կրտսեր սերնդի հայագետները: Նա ղեկավարում ու ընդդիմախոսում է թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ, անգամ իսկ ուսանողական գիտական, կուրսային ու դիպլոմային աշխատանքներ՝ տալիս օգտակար խորհուրդներ, անում արժեքավոր դիտողություններ՝ երբեք չընկրկելով գիտական խղճմտանքը, չմոռանալով հայագիտության շահն ու արդի պահանջները:

Վաստակաշատ գիտնականը ակտիվորեն մասնակցում է նաև երիտասարդ հայագետների ընտրության ու պատրաստման խիստ կարևոր ու պատասխանատու գործին:

Սեն Արևշատյանը գիտության ակտիվ պրոպագանդիստ է: Նա բազմիցս դասախոսություններ է կարդացել ինչպես մեր հանրապետության շրջաններում ու Միության տարբեր հանրապետություններում, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներում (Հորդանան, Սիրիա, Լիբանան, Ֆրանսիա, Լեհաստան), գիտական զեկուցումներով ու հաղորդումներով մասնակցել է միջազգային ու համամիութենական մի շարք նստաշրջանների ու գիտաժողովների՝ ամենուր բարձր պահելով սովետական հայագիտության պատիվը: 1980 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Փարիզի համալսարանի հրավերով նա մասնակցել է Դավիթ Անհաղթի 1500-ամյակին նվիրված գիտական նստաշրջանին, զեկուցումներ կարդացել ֆրանսահայ հասարակայնության համար, ելույթ ունեցել Փարիզի հեռուստատեսությամբ: Իսկ վերջերս Ս. Արևշատյանը նորից եղավ Ֆրանսիայում՝ մասնակցելու Սորբոնի համալսարանի կազմակերպած բյուզանդագիտական միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր հայ-բյուզանդական պատմական, գիտական ու մշակութային առնչությունների պրոբլեմին: Այստեղ նա հանդես եկավ «Դավիթ Անհաղթ և Դիոնիսիոս Արեոպագացի» խիստ շահեկան զեկուցումով, որտեղ, ըստ էության, խորացնում ու գիտական նոր փաստերով հիմնավորում է դեռևս 1980 թ. իր իսկ առաջադրած այն դրույթը, որ Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի փիլիսոփայական-աստվածաբանական տրակտատների հավանական հեղինակը կամ դրանց ստեղծման գործուն մասնակցածներից մեկը եղել է Դավիթ Անհաղթը: Խորապես համոզված եմք, որ Ս. Արևշատյանի այդ վարկածը հաստատվելու դեպքում էապես կճարտանան մեր պատկերացումները ինչպես Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության, այնպես էլ հին և միջնադարյան հայ փիլիսոփայության մասին. դա կլինի հայագիտության լուրջ նվաճումներից մեկը:

Արևշատյան-գիտնականն իր գրասեղանից ու աշխատասենյակից զատ ոչինչ չճանաչող կաբինետային հետազոտող չէ, այլ ակտիվորեն մասնակցում է հանրապետության հասարակական-կուսակցական կյանքին, հանդես դալիս գիտության կազմակերպչի ու ղեկավարի դժվարին դերում: Նա քանիցս ընտրվել է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի կուսակազմակերպության քարտուղար ու կուսբյուրոյի անդամ, իսկ այժմ ղեկավարում է Մատենադարանի ու նրա գիտական խորհրդի աշխատանքները:

Եթե այս ամենին ավելացնենք Ս. Արևշատյանի անդամակցությունն ու գործուն մասնակցությունը հանրապետության գիտական, հասարակական ու մշակութային կազմակերպություններին, ապա թերևս, ուրվագծվի այն մեծ ծանրաբեռնվածությունը, որ ի վիճակի է կրելու գիտնականը: Ս. Արևշատյանը ոչ մի տեղ և ոչ մի անգամ չի թերանում, որովհետև ունի մարդկային բնավորության ամենակարևոր գիծը՝ պարտքի ու պարտաճանաչության բարձր զգացում:

Արդ՝ օդավելով պատեհ առիթից, ցանկանում ենք բազմավաստակ գիտնականին, գիտության կազմակերպչին ու պրոպագանդիստին շնորհավորել ծննդյան 60-ամյակի առթիվ, ցանկանալ նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք ու դիտական նորանոր նվաճումներ ի շահ հայագիտության:

ՀՐԱՉԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեծարգո հոբելյար

Հայաստանի դիտական և ընթացող լայն հասարակայնության հետ միասին ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիան ի սրտե շնորհավորում է Ձեզ՝ ներհուն գիտնականիդ, քաղաքացուդ, մեր ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամիդ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ: Ձեզ մաղթում քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ ի փառս հայագիտության հետագա զարգացման:

ՀՍՍՀ ԳԱ «ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ